



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ  
Հ Ր Ա Մ Ա Ն

«23» հուլիսի 2008թ.

N 103-ՎԿ/Ս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՁԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ  
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1821-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 12-րդ կետի դ) ենթակետը և ելնելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Ձբաղվածության պետական ծառայություն» գործակալության մարզային և տարածքային կենտրոնների կողմից աշխատանք փնտրող չգրադված անձանց հաշվառելու, գործազուրկի կարգավիճակ տալու, հաշվառումից հանելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 23-ի թիվ 472-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 12-րդ կետի ա) ենթակետով սահմանված՝ անձի աշխատանքային կամ այլ բնույթի գործունեության տեսակներով զբաղված լինելու ժամանակահատվածում կատարված պարտադիր սոցիալական ապահովության վճարումների կատարման կամ աշխատավարձ ստանալու ժամկետների, աշխատանք փնտրող չգրադված անձի կենսաթոշակ ստանալու մասին տեղեկատվություն ստանալու անհրաժեշտությունից՝


Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հատուտել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Ձբաղվածության պետական ծառայություն» գործակալության (այսուհետ՝ գործակալություն) կողմից աշխատանք փնտրող չգրադված անձանց գործազուրկի կարգավիճակ տալու նպատակով անձի աշխատանքային կամ այլ բնույթի գործունեության տեսակներով զբաղված լինելու ժամանակահատվածում կատարված պարտադիր սոցիալական ապահովության վճարումների, ինչպես նաև աշխատանք փնտրող չգրադված անձի կենսաթոշակ ստանալու մասին Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայություն (այսուհետ՝ ծառայություն) հարցում կատարելու և ծառայության կողմից տեղեկատվությունը գործակալությանը տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ծառայության պետ Վ. Խաչիկյանին՝

ապահովել ծառայության տարածքային մարմինների կողմից անձի աշխատանքային կամ այլ բնույթի գործունեության տեսակներով զբաղված լինելու ժամանակահատվածում կատարված պարտադիր սոցիալական ապահովության վճարումների և կատարման կամ աշխատավարձ ստանալու ժամկետների, ինչպես նաև աշխատանք փնտրող չզբաղված անձի կենսաթոշակ ստանալու մասին տեղեկատվության տրամադրումը գործակալության մարզային և տարածքային կենտրոններին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 23-ի թիվ 472-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 12-րդ կետի ա) ենթակետով սահմանված համապատասխան հարցումը ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:



Ա. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

**Կ Ա Ր Գ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂ ՉԶԲԱՂՎԱԾ ԱՆՉԱՆՑ ԳՈՐԾԱԶՈՒՐԿԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՁԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՍ ԱՅԼ ԲՆՈՒՅԹԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՈՎ ԶԲԱՂՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ, ԻՆՉՊԵՄ ՆԱԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂ ՉԶԲԱՂՎԱԾ ԱՆՁԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության (այսուհետ՝ գործակալություն) կողմից աշխատանք փնտրող չգրադված անձանց գործազուրկի կարգավիճակ տալու նպատակով անձի աշխատանքային կամ այլ բնույթի գործունեության տեսակներով զբաղված լինելու ժամանակահատվածում (այսուհետ՝ անձի զբաղված ժամանակահատված) կատարված պարտադիր սոցիալական ապահովության վճարումների, ինչպես նաև աշխատանք փնտրող անձի կենսաթոշակ ստանալու մասին Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության պետական ծառայություն (այսուհետ՝ ծառայություն) հարցում կատարելու և ծառայության կողմից տեղեկատվությունը գործակալությանը տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Անձի աշխատանքային կամ այլ բնույթի գործունեության տեսակներով զբաղված լինելու ժամանակահատվածում կատարված պարտադիր սոցիալական ապահովության վճարումների, ինչպես նաև աշխատանք փնտրող անձի կենսաթոշակ ստանալու մասին հարցում կատարելու և տեղեկատվություն տրամադրելու գործընթացն իրականացվում է գործակալության և ծառայության տարածքային մարմինների միջոցով: Զբաղվածության մարզային կամ տարածքային կենտրոնը հարցումը թղթային (Ձև 1-ը կցվում է) և էլեկտրոնային կրիչով ուղարկում է ծառայության իր սպասարկման տարածքում գործող տարածքային բաժին:

3. Ծառայության համապատասխան տարածքային բաժնի կողմից հարցում կատարած զբաղվածության մարզային կամ տարածքային կենտրոնին տրամադրվող տեղեկատվությունը (Ձև 2-ը կցվում է) 1992 թվականի հունվարի 1-ից մինչև 2005 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար վերաբերում է «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ ապահովադիրների կողմից կատարած պարտադիր սոցիալական ապահովության, իսկ 2005 թվականից հետո՝ գործատուի կամ անձի (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի, ֆիզիկական անձի) կողմից պարտադիր սոցիալական ապահովության (մինչև 2008 թվականի հունվարի 1-ը՝ պարտադիր սոցիալական ապահովագրության) վճարներին (այսուհետ՝ սոցիալական վճար), հիմք ընդունելով ծառայությունում առկա անհատական հաշվետվությունների տվյալները :

4. Հարցումը ստացած ծառայության տարածքային բաժնում նշված ապահովադիրների հաշվառված չլինելու դեպքում, վերջինս հարցումը համապատասխան գրությամբ ներկայացնում է ծառայություն:

5. Ծառայությունն անհրաժեշտ տեղեկատվությունն ուղարկում է իր տարածքային բաժին՝ հարցում կատարած զբաղվածության մարզային կամ տարածքային կենտրոնին այն տրամադրելու համար:

6. Հարցումը ստացած ծառայության տարածքային բաժնն անձի կենսաթոշակ ստանալու մասին տեղեկությունը տրամադրում է՝ ելնելով հանրապետությունում գրանցված կենսաթոշակառուների տվյալների բազայից:

7. Հարցումը ստացած ծառայության տարածքային բաժնն ամբողջական տեղեկատվությունը տրամադրում է համապատասխան զբաղվածության մարզային կամ տարածքային կենտրոնին՝ սույն կարգի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված տեղեկատվությունը ծառայությունից ստանալուց հետո:

8. Եթե ծառայությունում բացակայում են սույն կարգի 3-րդ կետում նշված տեղեկությունները, ապա զբաղվածության մարզային կամ տարածքային կենտրոնները սահմանված կարգով քաղաքացիներից ընդունում են գործատուի կողմից տրամադրված՝ տվյալ անձին աշխատավարձ վճարած լինելու մասին տեղեկանքը: Նշված տեղեկանքը հիմք է ընդունվում նաև այն դեպքում, երբ 1992-2005 թվականների ընկած ժամանակահատվածի համար գործատուն ունի սոցիալական վճարների պարտք:



